## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

*Անուրանալի և ծանրակշիռ է Գեորգ Բրուտյանի ավանդը հայ ու համաշխարհային փիլիսոփայական մտքի գանձարանում: Նրա անունը վաղուց իր արժանի տեղն է զբաղեցնում համաշխարհային փիլիսոփայական մտքի ժամանակակից դասականների և բարձրագույն կրթության երախտավորների շարքում: Գ. Բրուտյանի կենսագրությունը գիտության ու կրթության գործին անխոնջ և արգասավոր նվիրումի գեղեցիկ օրինակ է:*

*ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգ Աբելի Բրուտյանը ծնվել է Հայաստանի Սևքար գյուղում 1926 թ.: 1947 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Զուգահեռաբար հումանիտար կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և բանասիրության ֆակուլտետներում: 1951 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի տրամաբանության ամբիոնի ասպիրանտուրան և աշխարհահռչակ գիտնական պրոֆ. Վ. Ֆ. Ասմուսի ղեկավարությամբ պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 35 տարեկանում Գ. Բրուտյանը Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանել է հերթական ատենախոսությունը, ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ դառնալով իր մասնագիտության գծով փիլիսոփայության ամենաերիտասարդ դոկտորը Խորհրդային Միությունում: 1963 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:*

*Անուրանալի է Գ. Բրուտյանի ավանդը գիտության և կրթության գործի կազմակերպման բնագավառում: Նա հիմնադրել և ղեկավարել է մի շարք առաջատար ամբիոններ և գիտական կազմակերպություններ. եղել է Երևանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի հիմնադիր վարիչը (1962–1970), Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի հիմնադիր վարիչը (1970–1986): Մեծ դեր է խաղացել ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծման ու կայացման գործում: 1971 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1982-ին՝ ակադեմիկոս:*

*1977 թ. Գ. Բրուտյանն ընտրվել է ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: 1994-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը և փոխպրեզիդենտ: Մինչ օրս էլ ակադեմիկոս Բրուտյանը շարունակում է իր հարուստ փորձն ու կարողությունները ներդնել հայրենական գիտության զարգացման գործում՝ վարելով ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդականի պաշտոնը և դասավանդելով Մայր բուհում:*

*Ընդգրկուն է Գ. Բրուտյանի գիտական հետազոտությունների թեմատիկան: Նա հեղինակ է աշխարհի 20 լեզուներով հրատարակված ու թարգմանված ավելի քան 60 մենագրությունների, գրքերի ու դասագրքերի, շուրջ 200 գիտական հոդվածների:*

*Գ. Բրուտյանը հիմնադիր և հեղինակ է գիտական մի շարք ուղղությունների ու հիմնարար մեթոդաբանական սկզբունքների, որոնցից են.*

*ա) Բազմատրամաբանության հայեցակարգը, որի հիմնական գաղափարները շարադրված են Օքսֆորդում հրատարակվող «Մայնդ» ամսագրում հրատարակված նրա հոդվածում:*

*բ) Փոխակերպական (տրանսֆորմացիոն) տրամաբանությունը, որը ուսումնասիրելով մտքի բացահայտ (էքսպլիցիտ) և ոչ բացահայտ (իմպլիցիտ) ձևերի առնչությունները, նոր հորիզոններ է բացում մտածողության և մտավոր հաղորդակցման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների համար:*

*գ) Թարգմանության տրամաբանությունը, որը նոր խոսք է հերմենևտիկայի և թարգմանության հիմնարար սկզբունքների ոլորտում:*

*դ) Լեզվաբանական լրացչության սկզբունքը, որը շրջադարձային նշանակություն ունեցավ ինչպես իմացաբանության, մտածողության և լեզվի առնչությունների հետազոտման, այնպես էլ լեզվի փիլիսոփայության ոլորտում եղած մի շարք խնդիրների նորովի մեկնաբանման ու լուծման առումով:*

*է) Արժեքավոր է նաև Գ. Բրուտյանի ներդրումը ինչպես հայ փիլիսոփայական մտքի ուշագրավ դրվագների (մասնավորապես Դավիթ Անհաղթի ուսմունքի) հետազոտման և դրանք համաշխարհային գիտական հանրության սեփականությունը դարձնելու գործում, այնպես էլ հայագիտության մեթոդաբանական սկզբունքների մշակման առումով:*

*զ) Լայն ճանաչում ունի փաստարկման տեսության բրուտյանական հայեցակարգը: Նրա հիմնադրած Փաստարկման երևանյան դպրոցի (որի կարգախոսն է դարձել «Ոչ թե ուժի փաստարկով, այլ փաստարկի ուժով, ոչ թե իշխանության փաստարկով, այլ փաստարկի իշխանությամբ» բրուտյանական բանաձևումը) արդյունավետ գործունեությունը բարձր է գնահատվում փաստարկման հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող միջազգային կենտրոնների կողմից, իր հետազոտական ծրագրերում ներգրավելով տարբեր երկրների բազմաթիվ գիտնականների:*

*Տարիներ շարունակ ղեկավարելով փիլիսոփայական առարկաների գծով ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը և ղեկավար պաշտոններ վարելով գիտության և կրթության տարբեր օղակներում՝ ակադեմիկոս Գ. Բրուտյանը ծանրակշիռ ներդրում է ունեցել փիլիսոփայության, տրամաբանության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության բնագավառներում գիտական նոր և ար-*

*ժանի հերթափոխի պատրաստման գործում: Ուսանելի և օրինակելի է բազմավաստակ դասախոսի և ուսուցչի հոգատար վերաբերմունքը երիտասարդ գիտնականների նկատմամբ: Նրա անմիջական ղեկավարությամբ բազմաթիվ շնորհալիներ առաջին քայլերն են կատարել գիտության բնագավառում, դարձել ճանաչված մասնագետներ, ոմանք էլ՝ հռչակավոր գիտնականներ:*

*Իր կրակոտ խառնվածքով, նախաձեռնող գործելակերպով, անընկճելի լավատեսությամբ Գ. Բրուտյանը շարունակում է ոգևորել և առաջնորդել իր սաներին ու գործընկերներին: Ետխորհրդային տարիներին, ի հեճուկս սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների, նա կազմակերպեց և ներկայումս էլ շարունակում է նախաձեռնել միջազգային գիտաժողովներ, արժեքավոր հրապարակումներ, որոնք խիստ բարձր են գնահատվում ու կարևորվում ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ ճանաչում բերելով հայրենական գիտությանն ու կրթական հաստատություններին:*

*Որպես իսկական մտավորական և հայրենասեր անհատականություն, ակադեմիկոսը գործուն մասնակցություն է բերել մեր հասարակության առջև ծառացած կարևորագույն խնդիրների լուծմանը: Ղարաբաղյան շարժման առաջին փուլից ի վեր Գ. Բրուտյանն իր հեղինակությունն ու արտասահմանյան գործընկերների հետ ունեցած կապերը ի սպաս դրեց Արցախի հիմնախնդրի օբյեկտիվ ներկայացման և արդարացի լուծման ուղիների որոնման գործին: Նրա նախաձեռնությամբ աշխարհի փիլիսոփայական հասարակությունը, հանձինս առավել հեղինակավոր ու վառ անհատականությունների, իր ձայնը բարձրացրեց Խորհրդային Ադրբեջանում հայերի նորօրյա ցեղասպանության դատապարտման և արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման պահանջով: Հրապարակվեցին հոդվածներ ու բաց նամակներ «Նյու Յորք թայմզ» օրաթերթում, տեղական և արտասահմանյան պարբերականներում, հղվեցին ուղերձներ գերտերությունների կառավարություններին, արտաքին քաղաքականության գերատեսչություններին, վերլուծական կենտրոններին: Այդպիսի նամակների ու դիմումների տակ ստորագրեցին համաշխարհային մտքի այնպիսի հզոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հանս - Գեորգ Գադամերը (Հայդելբերգի համալսարան, Գերմանիա), Լորդ Իսայ Բեռլինը (Օքսֆորդ, Անգլիա), Տերեզե Գոուին - Դեկարիեն (Մոնրեալի համալսարան, Կանադա), Ժակ Դերիդան (Փարիզ, Ֆրանսիա), Ռոջեր Ս. Կլարկը (Մարդու իրավունքների միջազգային լիգա), Յուրգեն Հաբերմասը (Ֆրանկֆուրտի համալսարան, Գերմանիա), Ուիլյամ Վանդեն Հեուվելը (Նյու Յորք, ԱՄՆ նախկին դեսպանը ՄԱԿ-ում), Ժան-Պիեռ Մահեն (Փարիզ, Ֆրանսիա), Ջերոմ Ջ. Շեստակը (Մարդու իրավունքների միջազգային լիգայի նախագահ), Հելեն Ֆեյնը (Ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի գործադիր տնօրեն, Հարվարդ, Քեմբրիջ) և շատ ուրիշ հեղինակավոր գիտնականներ ու ճանաչված գործիչներ:*

*Միջազգային մի շարք գիտաժողովներում, որոնք կազմակերպել կամ որոնց իր մասնակցությունն է բերել Գեորգ Բրուտյանը, նախաձեռնությամբ ընդունված բանաձևերում և հրապարակած բաց նամակներում իրենց վճռական բողոքն են հայտնում Հարավային Կովկասում հայերի նկատմամբ իրականացվող անարդարութ-*

*յունների կապակցությամբ, իրենց ձայնը բարձրացնում արցախյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի լուծման, հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման նպատակով:*

*Վերջին տարիներին արտասահմանյան միջազգային գիտակրթական կենտրոններում (Սոֆիայի, Աթենքի, Սանկտ Պետերբուրգի, Գենտի, Բրյուսելի, Տուրկուի, Երուսաղեմի հրեական, Բուենոս Այրեսի Դե Պալերմո և Ամստերդամի համալսարաններում, Լա Կորունիայի թագավորական ակադեմիայում, ճապոնական Ուտագավա կազմակերպությունում, հայագիտական կենտրոններում) կարդացած իր դասախոսություններով ու հրապարակային ելույթներով, ի թիվս գիտական հիմնախնդիրների մեկնաբանման և լուծման գործում բերած իր ավանդի, Գ. Բրուտյանը հետևողականորեն իր լուման է ներդրել նաև արցախյան հիմնահարցի օբյեկտիվ ներկայացման ու լուսաբանման, XX դարասկզբին Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում:*

*Այսօր էլ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանն անհատնում եռանդով իր հարուստ գիտելիքներն ու իմաստուն փորձն է բերում հայրենական գիտության ու կրթության զարգացման գործում: Նա հիմնադրել ու ղեկավարում է Փաստարկման միջազգային ինստիտուտը, Հայոց փիլիսոփայական ակադեմիան, Փիլիսոփայության միջազգային ակադեմիան՝ նոր ուղիներ հարթելով և գիտական հորիզոններ բացելով երիտասարդ գիտնականների և ուսանողների համար:*

*Չնայած փիլիսոփայության բնագավառում ունեցած իր մեծագույն ներդրումներին՝ Գ. Բրուտյանը չափազանց համեստ մարդ է: Ութսուն տարվա ընթացքում նա ոչ մի անգամ չի համաձայնվել նշել իր հոբելյանները: Ութսունամյակը նշվեց նրան հանկարծակիի բերելով: Դա առիթ էր, որպեսզի իր բազմաթիվ սաները, գործընկերներն ու ուսանողները իրենց սրտաբուխ խոսքն ասեին հոբելյարին: Նրան ոսկե մեդալներով պարգևատրեցին ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, պատվավոր դոկտորի աստիճան շնորհեց Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանը, պատվավոր պրոֆեսորի կոչում՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը:*

*Հոբելյանի առթիվ իրենց ուղերձներն էին հղել տասնյակ երկրներից աշխարհահռչակ գիտնականներ, պետական-հասարակական գործիչներ, որոնք ամփոփում էին Գ. Բրուտյանի կատարած գործի գնահատականը: ՀՀ Ազգային ժողովի ուղերձն սկսվում է հետևյալ խոսքերով. «Ձեր ապրած կյանքը փայլուն վկայությունն է՝ ինչպես մեկ անձի մեջ կարող են համատեղվել գիտնականը, մանկավարժը, քաղաքացին: Եվ բոլոր երեք դրսևորումներում՝ հասնել համաշխարհային ճանաչման»: Նրա ներդրումների համաշխարհային նշանակությունն ընդգծված են բազմաթիվ ուղերձներում. «Դուք վաղուց Ձեր արժանի տեղն եք զբաղեցնում համաշխարհային փիլիսոփայական մտքի ժամանակակից երախտավորների շարքում»,– ասված է ԵՊՀ ռեկտորի ուղերձում: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան իր ուղերձում նշում է. «Մենք առանձնահատուկ հպարտությամբ ենք նշում, որ աշխարհի գիտական հասարակայնության լայն շրջանակները Ձեզ ճանաչում են որպես մեծավաս-*

*տակ գիտնականի, հանրահայտ տեսաբանի, գիտական մի շարք ուղղությունների հիմնադրի, Հայաստանում գիտական դպրոցի հիմնադրի ու ղեկավարի, գիտության հիանալի կազմակերպչի»: «Միրելի նահապետ, հայ և համաշխարհային փիլիսոփայության ասպարեզում Դուք անցել եք փառապանծ ուղի՝ կատարելով անգնահատելի հսկայական աշխատանք մեր հայրենիքի գիտական և կրթական համակարգի բարգավաճման գործում… Ձեր՝ հազվագյուտ գիտնական-փիլիսոփայի ջանքերով մեծապես հարստացել են համաշխարհային հասարակության արժեքները»,– ասված է Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ուղերձում: «Իբրև գործող փիլիսոփա-ակադեմիկոս, բազմաթիվ արժեքավոր աշխատություններով հարստացրել եք ոչ միայն հայ, այլև համաշխարհային փիլիսոփայական գրականությունը» (Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ուղերձից): «Ձեր վրացի գործընկերներն ու բազմաթիվ երկրպագուները շնորհավորում են Ձեզ՝ աշխարհահռչակ փիլիսոփային և գիտության ազդեցիկ կազմակերպչին, համաշխարհային միասնական փիլիսոփայական դաշտի ստեղծման գործում աննկուն մարտիկին, փիլիսոփայության և տրամաբանության բազմաթիվ հանրաճանաչ և անփոխարինելի աշխատությունների հեղինակին, մի շարք փիլիսոփայական ուղղությունների հիմնադրին, «Նյուզ ընդ վյուզ» միջազգային ամսագրի հիմնադիր-խմբագրին, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտին» (Վրաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Գուրամ Թևզաձեի ուղերձից):*

*Եվս մի քանի գնահատականներ. «Դուք կանգնած եք բազմաթիվ գիտական դպրոցների և փիլիսոփայական ուղղությունների ակունքներում: Դուք ստեղծել եք ոչ միայն Փաստարկման երևանյան դպրոցը, որի արդյունավետ գործունեությունը ճանաչվել է փաստարկման ուսումնասիրության համաշխարհային առաջատար կենտրոնների կողմից, այլև Ձեր ստեղծագործական գաղափարների և ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվել է Մինսկի փաստարկման դպրոցը: Հայ փիլիսոփայական և տրամաբանական մտքի պատմության, Դավիթ Անհաղթի տրամաբանական ստեղծագործության Ձեր լուրջ, հիմնարար հետազոտությունները հստակ մեթոդաբանական ուղի են հարթել արիստոտելագիտության զարգացման որոշ հակասությունների հաղթահարման համար՝ յուրահատուկ էջ ստեղծելով տրամաբանության համաշխարհային պատմագրության մեջ: Հայագիտության և մետահայագիտության ոլորտում Ձեր նորույթները մեծ ներդրում են Հայաստանի ազգային հոգևոր կյանքի էական իրադարձությունների փիլիսոփայական իմաստավորման գործում և վկայում են Ձեր խորը ազգային դիրքորոշման մասին, որպես գիտնականի և բազմաչարչար, իմաստուն հայ ժողովրդի փառապանծ որդու:*

*Ձեր բազմակողմանի ստեղծագործական գործունեությունը նպաստում է ազգային փիլիսոփաների նոր սերնդի աճին, ինտելեկտուալ լայն շրջանակներում փիլիսոփայական և տրամաբանական գիտելիքների արմատավորմանը, Հայաստանի հոգևոր վերածննդին» (ակադեմիկոսներ՝ Դ. Ի. Շիրոկանով, Յա. Յասկեվիչ, պրոֆեսորներ՝ Վ. Ֆ. Բերկով, Վ. Ի. Չուեշև, Բելոռուս):*

*«Քո անունը առնչվում է համամարդկային արժեքների և համամարդկային կապերի հետ: Վաղ է խոսել հուշարձանների մասին, բայց Փիլիսոփայության միջազգային ակադեմիան կարևորագույնում՝ իր ծնունդով և իր գործունեությամբ, պարտական է քեզ: Հայաստանը գիտեն և սիրում են աշխարհի տարբեր անկյուններում, այդ թվում և մեզ մոտ՝ Ուկրաինայում, և քո գործունեությունը բազմապատկել է Հայաստանի փառքը» (Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Միրոսլավ Պոպովիչ):*

*«Ձեր հեռահար նախաձեռնությունները, որպես Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հիմնադիր և պրեզիդենտ, վկայում են փիլիսոփայության համաշխարհային դերի նկատմամբ ունեցած Ձեր հավատի և այդ գործին Ձեր նվիրվածության մասին: Philosophia perennis-ին ծառայելու Ձեր ազնիվ ջանքերը արժանի են փիլիսոփաների համաշխարհային հասարակայնության աջակցությանը» (Ավստրիայի Իննսբրուքի համալսարանի փիլիսոփայության ինստիտուտի նախագահ Հանս Կոհլեր):*

*«Իր ինտելեկտուալ գործունեության մեջ և որպես Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտ Գեորգ Բրուտյանն ամբողջ աշխարհում հայտնի է և որպես առաջատար և ճանաչված միջազգային փիլիսոփա: Ձեր ներդրումները Հայաստանում և ամբողջ աշխարհում լայն ճանաչում են գտել...» (Երուսաղեմի հրեական համալսարանի պրոֆեսոր, հայկական ուսումնասիրությունների ծրագրերի ղեկավար Մայքլ Ստոուն):*

*«Ոչ միայն Հայաստանում, այլև Լիտվայում, Եվրոպայում և ամբողջ աշխարհում բազմաթիվ մարդիկ մեծապես հպարտ են Ձեզանով, փիլիսոփայության և հասարակագիտության մեջ Ձեր կատարած աշխատանքով: Մենք նրանց շարքերում ենք: Ավելին, մենք համարձակվում ենք մեզ Ձեր ընկերները համարել: Թող կյանքը Ձեր նկատմամբ լինի նույնքան մեծահոգի, որքան Դուք եք եղել և կաք շատ-շատ մարդկանց համար» (Լիտվայի Պառլամենտի անդամ, Կրթության, հետազոտությունների և մշակույթի կոմիտեի նախագահ, Եվրոպայի Պառլամենտի անդամ, Լիտվայի ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ռոլանդաս Պավիլիոնիս):*

*«Մենք բարձր ենք գնահատում Ձեզ որպես համաշխարհային հռչակ ունեցող գիտնականի, որ իր մեծ ներդրումն է ունեցել հասարակության ժամանակակից անկյունաքարային հիմնախնդիրների ուսումնասիրության գործում: Գիտնականի և գիտության կազմակերպչի Ձեր տաղանդը օգնում է լուծել հետսոցիալիստական փոխակերպվող հասարակության բարդ խնդիրները» (Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, «Հասարակություն և տնտեսություն» միջազգային ամսագրի գլխավոր խմբագիր Կոնստանտին Միկուլսկի):*

*Ցանկանում ենք ակադեմիկոս Գեորգ Բրուտյանին՝ անվանի Գիտնականին ու Մանկավարժին, սիրված Ուսուցչին քաջառողջություն, ստեղծագործական բեղուն և երկար տարիներ՝ ի բարօրություն իր ժողովրդի և ի փառս հայրենի գիտության ու դրա միջազգային հեղինակության:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ